[illegible]

# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

ՕՐԱԳԻՐՈՑՆ

ԹԻՒ 34 | ԻԶՄԻՐ | ՈՒՐԲԱԹ 1 ՅՈՒԼԻՍ 1844․

Իզմիր 1 Յուլիս ։

Կոստանդնուպօլսոյ Հարգամեծար մեր Թղթակիցը հետեւեալ լուրերս կը ծանուցանէ ։

Եւրոպայի քանի մը երեւելի գիտնական և համարեղ արուեստագէտ անձինք՝ ասկէ մի հետէ մեր Մայրաքաղաքը գալով՝ արդարև մեծ պատիւը ըրին քաղաքիս իրենց զարմանալի համարեղութեամբ, և իրենք ալ Կայսերական պարգեւներու արժանի եղան․ վասն զի Մեծափառ Կայսրը առատ շնորհներով փարձատրեց ամէնն ալ, թէ իր հպատակներուն բաց աձնայնի օգտին և թէ անոնց քաջալերութեանը համար ։ Նոյն համարեղ արուեստաւորներէն պարօն Լըմէնիօ Գոմեգիին մայրաքաղաքս գալը՝ երբոր Մեծափառ Կայսրը լսեց՝ թէ օդապարիկ նաւարկութիւն ընել ալ գիտէ, յատկապէս բարեհաճեցաւ հրաման ընելու, որ Մայրաքաղաքիս մէջն ալ իր արանելիք արհեստը գործի դնէ ։

Ուստի պարոն Լըմէնիօ Գոմեգին անմիջապէս հաճութեամբ Մեծափառ Կայսեր հրամանը յանձնառու եղաւ կատարելու․ և անցեալ երկուշաբթի ժամը վեցուկէսին Եւրոպացւոց Հայտար փաշայ ըսուած Սերտէնի զբօսարանէն մեծ սխեց իր օդապարիկով երկրէն բարձրանալ դէպ 'ի երկինքը․ ուր Մեծափառ Խնկեարը բոլոր Կայսերական հետեւանքներով և երեւելի անձինքներով այս զարմանալի հանդէսին ներկայ էին․ նաև զանազան Տէրութեանց Դեսպաններն ալ՝ և գրեթէ Մայրաքաղաքիս ժողովրդոց մեծ մասը այն տեղուանք հաւաքուած էին․ և օդապարիկին բարձրանալուն, անոնց ալ ուրախութեան աղաղակին ձայնը երկինքը կելլէր․ կեցցէ մեր բարեխնամ Մեծափառ Կայսրը գոչելով ։

Իսկ այն ինչ օդապարիկը գետնէն երեսուն քառասուն կանգունի չափ բարձրացաւ սկսաւ օդին մէջէն ծաղիկներ և ոսկեզօծ թղթեր թափել հանդիսականներուն վրայ․ և այս թղթերուն մէջ՝ Մեծափառ Կայսեր վրայօք արժանաւոր գովեստներ կըկարդացուէր ։

Օդապարիկը մէր երթալը համար պէտք եղած պատրաստութիւնները, մէկ երկու շաբաթ առաջ՝ հանդէս եղած միջոցին առջի սխա-շնուելու ։ Լսուեց և թէ օդապարիկին վարի ծայրը կախած նաւակին շինողն, Հոլանդի Մայրաքաղաքին Մանուկեան յարգի Յարութիւն աղայն էր, որ Եւրոպայի երեւելի քաղաքները պտըտած է․ Լոնտրա և Փարիզին քաղաքներն ալ երկար ատեն կեցած ըլլալով՝ շինուածոց ճարտարապետութեան արհեստը շատ աղէկ սորվեր է 'իրօք, ուրիշ շատ հմտութիւններ ալ փորձած է զանազան արուեստներու մէջ ։

Օդապարիկին որ իջնալը գիտ չըսիցուեր․ բայց Բարձրագոյն Դուռէն յատկապէս հրամանագիր տրուեցաւ քաջահայր ծանուցարհութիւն՝ որ ուր և իջնալու ըլլայ նէ, չի բռնադատեն, և արժանաւոր յարգանք մատուցանեն ։

Ցիշեալ յարգամեծար մեր Թղթակիցը կը ծանուցանէ նաև գրովը, թէ Կոստանդնուպօլսոյ Արրազան փատրիարգ Տ․ Տ․ Աստուածատուր Եպս Լալիկողոր ամսոյ 26ին երկուշաբթի օր Պատրիարգական պաշտօնէն հրաժարուելը իր գրով խնդրեցեր է․ որպէս թէ իր ծերութիւնը չի ներեր պատուհասն նոյն բարձրագոյն պաշտօնը կատարելու․ ուստի Մայրաքաղաքս ազգային Եպիսկոպոսները արդէն կիսարհիլին ու ազգային ժողովքով արժանաւոր ընտրութիւնը ընեն նոր Պատրիարք հաստատելու համար ։

Եւրոպայի տէրութիւնները՝ հաստատութեան մեծ մասը և գրեթէ բոլոր օրագիրները այս օրերս իրենց հայեցուածքը և միտքերնին անսխալ կերպով մը դէպ 'ի Ափրիկէի հիւսիսային կողմը Մարոգի տէրութեան վրայ դարձուցին․ վասն զի այս տէրութիւնս որ մինչև հիմա Եւրոպայի ընդհանուր քաղաքականութենէն դուրս և անծանօթ էր, նոյն քաղաքականութեան շարժողութեան մէջ զանազան խնդիրներով մտնալէն 'ի զատ Պաղղիան՝ Անգղիան՝ Սպանիան՝ Սուէտը՝ և Տանիմարգն ալ նոյն վէճերուն հաղորդակից են ։

Պաղղիան, թէ որ Տէպս օրագրին նայելու ըլլանք, պատերազմ հրատարակած չէ՝ Մարոգի տէրութեան դէմ․ և ոչ Մարոգ Պաղղիոյ դէմ․ և շատ հաւանական կերևայ թէ ամենևին հարկ պիտի չըլլայ այն միջոցին հասնելու ։ Նոյն օրագիրը կըսէ նաև թէ Պաղղիան ամենևին միտք չունի Ափրիկէի իր իշխանութիւնը ընդարձակելու, Ափրիկէի մէջ արած տեղերը իրեն բաւական են, և հիմակուան ունեցած երկիրներէն ժամանակաւոր առեցնելու միտք չունի․ իսկ Պաղղիոյ մէջ եղած պատերազմական պատրաստութիւնները և Ժուանվիլի իշխանին հրամանատարութեամբ նաւատորմիղին դէպ 'ի Մարոգի կողմը երթալուն պատճառը՝ Պաղղիացւոց Մարոգի Կայսերէն կորսուածին հատուցումը պահանջելու համար է եղեր, Մարոգի զօրաց Պաղղիացւոց Ալճերիոյ սահմանը անցնելով Պաղղիացի զօրաց վրայ յարձակմամբ պատերազմելուն պատճառաւ ։ Ասկէ 'ի զատ կայսերէն պահանջելու են որ պէտհեւ իբր որ ըսեմ Մարոգի տէրութիւնը ամենևին Պաղղիացւոց թշնամի Ապտըլ Գատիրին պաշտպան չըլլայ ։

Սպանիան Մարոգի տէրութեան փոխարէն հատուցում կըպահանջէ իր Թանճէր քաղաքին գործակալ հիւպատոսը մեռցընելուն համար․ և այս պատճառաւ նոյն Ալճեզիրոյ քաղաքը բաւական նաւերէն և զօրհնաւէրէն բաղկացեալ նաւատորմիղը ղրկուեցաւ․ ուրիշ Սպանիոյ խորհրդարանին խնդիրը հաստատելու են․ և թէ որ հարկը պահանջէ իրենց հպատակները պաշտպանելով ապաստանարան ըլլալու են․ Անգղիոյ տէրութիւնը այս վէճին յառաջը առնելու համար, միջնորդ մնած է․ և Թանճէրի Անգղիոյ հիւպատոսն ալ իր տէրութեան հրամանով՝ ամէն միջոցները գործի կըդնէ՝ այս երկու տէրութեանց մէջ հաշտութիւնը հաստատելու համար ։

Սուէտի և Տանիմարգի տէրութիւնները Անգղիոյ և Պաղղիոյ պաշտպանութեամբ Մարոգի Կայսեր մինչև հիմայ տուած տարեկան տուրքերնին չեն ուզեր հատուցանելու․ և Կայսրն ալ ամենևին իր հաւանութիւնը չի տալով դէմ կըդնէ այս առաջարկութեան․ անոր համար Սուէտի տէրութիւնը նաւատորմիղ մը ղրկելու է դէպ 'ի Մարոգ՝ իր խնդիրը կայսեր հանեցընելու համար ։ Ֆրանքֆորթի կազէթ ալ Լոնտրայի օրագիրը կըսէ թէ՝ անշուշտ Տանիմարգի տէրութիւնն ալ պատրաստուելու է Սուէտին օրինակին հետևելու՝ որ և միարան իրենց խնդիրը յառաջ տանին ։

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ՏԵՂԵԿԱՏԱՆ

Իզմիր 1 Յուլիս ։

| | | |
|---|---|---|
| Լոնտրա | 107 ½ | 107 |
| Մարսիլիա | 169 | 168 ½ |
| Թրիեստ | 438 | 440 |
| Լիվօռնօ | | |
| Վիեննա | | |

Պոլիս 28 Յունիս ։

| | | |
|---|---|---|
| Լոնտրա | 109 | 108 ½ |
| Մարսիլիա | 170 | 168 ½ |
| Վիեննա | 447 | |
| Թրիեստ | 443 | 444 ½ |
| Լիվօռնօ | | |

Ի ԶՄԻՒՌՆԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ [illegible]